

օրէնքը, որ կ'արգիլէր արտասահմանեան ապրանքներու մեծ մասին ներածումը Աւստրիա, մասնաւորապէս այն ապրանքները որոնց առեւտուրով կը զբաղէին գլխաւորաբար Պուքովինայի հայերը: Հայերը բողոքեցին եւ նոյնիսկ արտազաղթով սպառնացան: Կառավարութիւնը ստիպուեցաւ զիջել եւ Պուքովինայի հայերէն մաքսային օրէնադրութեան շրջանէն, բացառիկ դրութեան մը մէջ դրաւ Աւստրիոյ այդ նահանգը եւ այդպէսով գոհացում տուաւ հայերուն:

Աւստրիական կառավարութիւնը, ասկէ զատ, ուրիշ դիւրութիւններ ալ տուաւ հայերուն: Օրինակի համար այն հայերուն որոնք Մոլտովայի մէջ կալուածներ ունէին՝ իրաւունք տրուեցաւ հոն արտադրուած բոլոր ապրանքները առանց մաքսի ներածելու Պուքովինա, նոյնպէս առանց մաքսի ներածել Մոլտովայի արօտավայրերուն մէջ գտնուող իրենց անասունները, եւ այլն:

Աւստրիական կառավարութիւնը, այդ առթիւ, որդոց որդի ազնուականութեան տիրոջ տուաւ Սուչովացի հայու մը, Իօհան Քափրիի, որ իր կապերուն շնորհիւ մեծապէս նպաստեց արտասահմանէն հայերու գաղթին դէպի Պուքովինա:

Հայոց տնտեսական դիրքը աւելի եւս շեշտուեցաւ, երբ Եօղէֆ Բ. կայսրը 1786-ին Սուչովա այցելելուն՝ զայն հռչակեց առեւտրական ազատ քաղաք: Ասկէ, հրապուրուած, Մոլտո-

վայի զանազան քաղաքներէն (մասնաւորապէս Ֆօքշանէն, Պօթօշանէն եւ Ռոմանէն) շատ մը հայեր գիմում ըրին Պուքովինա հաստատուելու, եւ կայսրը 1792 Ապրիլ 20 թուակիր հրովարտակով մը ընդունեց անոնց առաջարկած պայմաններուն մեծ մասը, — իրաւունք տալով Աւստրիոյ ամէն կողմը կալուած գնելու տեղական օրէնքներու սահմանին մէջ, միւս վաճառականներուն համահաւասար առեւտուրի ազատութիւն, իրաւունք գերծ մնալու զինուորական նեղութիւններէ եւ 20 տարի իրենց գաւակներուն համար իրաւունք զինուորութեանէ գերծ մնալու, ինչպէս նաեւ իրաւունք Մոլտովայի մէջ անասնապահութեամբ պարապելու, մոլտովական գինի ներածելու, տուներ շինելու եւ այլն:

Ժ.Թ. դարու երկրորդ կէսէն սկսեալ Պուքովինայի հայոց թիւը հետզհետէ կը նուազի, որովհետեւ պարագաները թոյլ չտուին որ ան առեւտրական կեդրոն մը դառնայ: Ընդհակառակը ան հետզհետէ կորսնցուց իր առեւտրական դիրքը, ու հայերը ստիպուեցան ապաստանիլ աւելի բանուկ կեդրոններ:

(Այս մասին աւելի ընդարձակօրէն տեսնել D. Dan-ի “Die Orientalischen Armenier in der Bukowina”, Dr. Johann Polek-ի “Die Armenier in der Bukowina”, Prof. Kaindl-ի “Geschichte der Bukowina” եւ Լեոն Բարայեանի «Հայերը Մոլտավիայում եւ Բուքովինայում» երկերուն մէջ):

